ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀՀՄՆ-ՄԱ-18/13-ԱՇՁԲ

ք. Երևան «20» մարտի 2018թ.

ՀՀ սփյուռքի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Զանգակ-97» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Սոկրատ Մկրտչյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գրքերի տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված Z աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 43444998 (քառասուներեք միլիոն չորս հարյուր քառասունչորս հազար ինը հարյուր իննսունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ սփյուռքի նախարարություն	«Զանգակ-97» ՍՊԸ
ք. Երևան Վ. Սարգսյան 3	ք. Երևան, Կոմիտաս 49/2
ՖՆ Գործառնական վարչություն	«Էյչ-Էս Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011000107	Հ/Հ 217001-0040013-001
ՀՎՀՀ 02705838	ՀՎՀՀ00830786
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

ԱՇԽԱՏԱՆՔ					
Հ/Հ	Անվանում	Նկարագիր	Քանակ	Միավորի գին	Ընդամենը գումար
1	«Զանգակ» այբբենարան	20x28, օֆսեթ 70, 4+4, 112 էջ	3600	2400	8640000
2	Ես սովորում եմ գրել Ա1, Ա2 (աշխատանքային տետրեր)	17x24, օֆսեթ 70, 2+4, 32, 32 էջ	3600	700	2520000
3	Ես սովորում եմ գրել Բ1, Բ2 (աշխատանքային տետրեր)	17x24, օֆսեթ 70, 2+4, 24, 24 էջ	3600	700	2520000
4	Իմ առաջին ընթերցարանը, դասագիրք, 1 դասարան	20x28, օֆսեթ 70, 4+4, 72 էջ	3200	1500	4800000
5	Մայրենի 2,(դասագիրք սփյուռքի դպրոցների համար)	17x24, օֆսեթ 70, 4+4, 80 էջ	750	1600	1200000
6	Մայրենի 2, աշխատանքային տետր 1, 2	17x24, օֆսեթ 70, 2+2, 32, 32 էջ	500	700	350000
7	Մայրենի 3 (դասագիրք սփյուռքի դպրոցների համար)	17x24, օֆսեթ 70, 4+4, 80 էջ	700	1600	1120000
8	Մայրենի - 3 (աշ. տետր 1, 2)	17x24 օֆսեթ 70, 2+2, 32, 32 էջ	500	700	350000
9	Մայրենի 4 (դասագիրք սփյուռքի դպրոցների համար)	17x24 օֆսեթ 70, 4+4, 120 էջ	500	1600	800000
10	Մայրենի - 4 (աշ. տետր 1,2)	17x24 օֆսեթ 70, 2+2, 32 էջ	500	700	350000
11	Այբբենարան (արևմտահայերեն)	20x28,օֆսեթ 70, 4+4, 96 էջ	200	2500	500000
12	Ընթերցարան 1 (արևմտահայերեն)	20x28,օֆսեթ 70,4+4, 96 էջ	200	2500	500000
13	Ընթերցարան 2 (արևմտահայերեն)	20x28,օֆսեթ 70,4+4, 96 է.	200	2500	500000
14	Արեւմտահայերենի քերականություն 1	17x24 օֆսեթ 70, 4+4, 144 էջ	200	2500	500000
15	Արեւմտահայերենի քերականություն 2	17x24 օֆսեթ 70, 2+4, 168 էջ	200	2500	500000
16	Ուսուցանող գրավոր աշխատանքները տարրական դասարաններում 1,2	17x24,օֆսեթ 70, 1+4,120 էջ	210	2300	483000
17	Ուսուցանող գրավոր աշխատանքները տարրական դասարաններում 3,4	17x24,օֆսեթ 70, 1+4,240 էջ	220	2300	506000

18	Գործնական աշխատանքներ մայրենիից:Տարրական դասարաններ	17x24,օֆսեթ 70, 1+4,144 էջ	250	2100	525000
19	Մայրենի 2: Գործնական աշխատանքների տետրեր	20x28 օֆսեթ 70, 2+4, 48 էջ	250	500	125000
20	Մայրենի 3:Գործնական աշխատանքների տետրեր	20x28 օֆսեթ 70, 2+4, 48 էջ	220	500	110000
21	Խոսք և հաղորդակցություն: Մեթոդական ձեռնարկ 2	14,5x20 օֆսեթ 70, 1+4, 88 էջ	200	600	120000
22	Մեծ Միեր: Ուսումնական ձեռնարկ (ռուսախոս երեխաների համար)	17x24,օֆսեթ 70, 4+4,176 էջ	600	3350	2010000
23	«Մեծ Միեր», աշխատանքային տետր(ռուսախոս երեխաների համար)	17x24,օֆսեթ 70, 2+4,144 էջ	600	2200	1320000
24	Թեմատիկ պաստառներ:Հայերենի այբուբենը	50x70 կավճ 250 գ, 4, 1 էջ	475	500	237500
25	Թեմատիկ պաստառներ:ՀՀ պետական խորհրդանիշները	50x70 կավճ 250 գ, 4, 1 էջ	500	500	250000
26	Պատկերազարդ այբուբեն	70x20 կավճ 250, 4+4, 2 էջ	250	500	125000
27	Բառատետր-բառարան:Տարրական դպրոց	17x24 օֆսեթ 70, 2+4, 112 էջ	325	1300	422500
28	Համառոտ պատմություն հայոց, պատկերազարդ և հանրամատչելի	17x24, օֆսեթ 70, 4+4,264 էջ	500	2100	1050000
29	Самоучитель армянского языка	17x24,օֆսեթ 70, 1+4,392 էջ	200	2300	460000
30	Учебник армянского языка для русскоязычных армян	70x100,1/6, օֆսեթ 15, 238 էջ	225	1500	337500
31	История Армении (для воскрессных школ)	17x24 օֆսեթ 70, 4+4, 120 էջ	400	2100	840000
32	Հայրենագիտություն Ա: Դասագիրք	17x24 օֆսեթ 70, 4+4, 96 էջ	250	2200	550000
33	Арменоведение 5	17x24 օֆսեթ 70, 4+4, 120 էջ	250	2200	550000
34	Նկարազարդ այբուբեն: Հայերեն տառերի գունազարդ հավաքածու	20x28 կավճ 250, 4+4, 1 էջ	250	2400	600000
35	Խաղագիրք մանուկների համար 1	17x24 օֆսեթ 70, 2+4, 64 էջ	300	500	150000
36	Խաղագիրք մանուկների համար 2	17x24 օֆսեթ 70, 2+4, 70 էջ	250	500	125000
37	Հայերեն դպրոցական բացատրական բառարան	17x24 օֆսեթ 70, 1+4, 408 էջ	120	2800	336000

38	Հայերեն ուղղագրական դպրոցական բառարան	17x24, օֆսեթ 70, 1+4, 408 էջ	120	2800	336000
39	Ճիշտ արտաբերենք հնչյունները: Գիրք-տետր	20x29 օֆսեթ 70, 2+4, 80 էջ	300	1000	300000
40	Մայրենի լեզվի զրուցարան	14.5x20, օֆսեթ 70, 1+4, 72 էջ	180	1200	216000
41	Էթնիկական մանկավարժություն	14.5x20 օֆսեթ 70, 1+4, 312 էջ	50	2000	100000
42	Երաժշտություն մանկապարտեզում	20x28, օֆ 70, 1+4, 220 էջ	100	3800	380000
43	Խոսքի զարգացման պարապումնքները մանկապարտեզի կրտսեր խմբում	17x24 օֆսեթ 70, 4+4, 158 էջ	70	2200	154000
44	10 հայ ականավոր արքաներ	22x31, օֆսեթ 150, 4+4, 104 էջ	50	6000	300000
45	10 հայ ականավոր թագուհիներ	22x31, օֆսեթ 130, 4+4, 104 էջ	50	6000	300000
46	Արևմտյան հայաստանի 10 ուխտավայրեր	22x31, օֆսեթ 150, 4+4, 112 էջ	50	6000	300000
47	Երաժշտառիթմական շարժումը և պարը կրտսեր դպրոցում գիրք + CD	17x24, օֆսեթ 70, 1+4, 120 էջ	90	2500	225000
48	Արտագրությունների, թելադրությունների և փոխադրությունների ձեռնարկ տարրական դպրոցի համար	17x24,օֆսեթ 70, 1+4,160 է.	18	1600	28800
49	Արևմտահայերենի քերականություն 3	17x24,օֆսեթ 70, 4+4, 144էջ	300	2500	750000
50	Մաթեմատիկա (1-ին դաս., 1, մաս)	22x28, օֆսեթ 70, 4+4, 96 էջ	156	1300	202800
51	Մաթեմատիկա (1-ին դաս., 2 մաս)	17x24, օֆսեթ 70, 4+4, 96 էջ	156	1300	202800
52	Մաթեմատիկա (2-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 4+4, 176 էջ	198	1500	297000
53	Կերպարվեստ (2-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 4+4, 64 էջ	36	1400	50400
54	Մաթեմատիկա (3-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 4+4, 176 էջ	170	1500	255000
55	Կերպարվեստ (3-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 4+4, 64 էջ	21	1400	29400
56	Մաթեմատիկա (4-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 4+4, 192 էջ	160	1500	240000
57	Կերպարվեստ (4-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 4+4, 80 էջ	21	1500	31500
58	Բնագիտություն (5-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 4+4, 160 էջ	10	1500	15000

59	Բնագիտություն (6-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 4+4, 160 էջ	45	1500	67500
60	Երկրաչափություն (7-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 2+4, 128 էջ	30	1600	48000
61	Անգլերեն (7-րդ դաս.)		10	1600	16000
62	Հայոց Պատմություն (8-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 4+4, 192 էջ	28	1800	50400
63	Համաշխարհային պատմություն (8-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 4+4, 176 էջ	38	1800	68400
64	Երկրաչափություն (8-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 2+4, 144 էջ	45	2000	90000
65	Կենսաբանություն (9-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 4+4, 176 էջ	55	1900	104500
66	Երկրաչափություն (9-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 2+4, 128 էջ	45	2000	90000
67	Աշխարհագրություն (10-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 4+4, 224 էջ	29	2200	63800
68	Երկրաչափություն (10-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 2+4, 128 էջ	80	2000	160000
69	Հայոց պատմություն (10-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 2+4, 224 էջ	60	2200	132000
70	Քիմիա (10-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 2+4, 240 էջ	25	2000	50000
71	Հայ գրականության քրեստոմատիա	14.5x20, օֆսեթ 70, 1+4, 176 էջ	10	1200	12000
72	Հայոց պատմություն (11-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 4+4, 240 էջ	59	2200	129800
73	Երկրաչափություն (11-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 2+4, 136 էջ	45	1700	76500
74	Քիմիա (11-րդ դաս.)	17x24, օֆսեթ 70, 2+4, 224 էջ	59	2000	118000
75	Քիմիա ձեռնարկ	14,5x20, օֆսեթ 70, 1+4, 144 էջ	1	1500	1500
76	Հայոց լեզու ձեռնարկ	17x24, օֆսեթ 70, 1+4, 864 էջ	1	4000	4000
77	Նախապատրաստվում եմ դպրոցին	20x28, օֆսեթ 70, 4+4, 80 էջ	15	1700	25500
78	Վաղը դպրոց կգնամ	17x24, օֆսեթ 70, 4+4, 56 էջ	15	500	7500
79	Ես սովորում եմ նկարել և գրել	17x24, օֆսեթ 70, 4+4, 32 էջ	15	400	6000
80	Թեմատիկ պաստառների փաթեթ նախադպրոցականների համար	50x70, կավճ 130, 4+4, 20 թերթ	3	12000	36000

81	Հայոց լեզվի ուղեցույց ռուսալեզու սովորողների համար	14,5x20, օֆսեթ 70, 1+4, 200 էջ	200	1500	300000
82	Տեխնոլոգիա 1-4 դաս.	14,5x20, օֆսեթ 70, 1+4, 126 էջ	1	1200	1200
83	Երաժշտություն 1-4 դաս	14,5x20, օֆսեթ 70, 1+4, 120 էջ	1	1498	1498
84	Մաթեմատիկա աշխ. Տետր 1 դաս, 1	17x24, օֆսեթ 70, 4+4, 32 էջ	44	350	15400
85	Մաթեմատիկա աշխ. Տետր 1 դաս, 2	17x24, օֆսեթ 70, 4+4, 32 էջ	44	350	15400
86	Ես և շրջական աշխարհը աշխ. Տետր 3 դաս.	17x24, օֆսեթ 70, 2+4, 32 էջ	45	350	15750
87	Ես և շրջական աշխարհը աշխ. Տետր 4 դաս.	17x24, օֆսեթ 70, 2+4, 32 էջ	45	350	15750
88	Հեքիաթներ երեխաների համար	20x28, կավճ 150, 4+4, 32 էջ	1	1500	1500
89	Մաթեմատիկա 1, թվադարան	20x28, օֆսեթ 70, 4+4, 8 էջ	7	1200	8400
90	Հայերենի աղբյուր /արևմտահայերեն/Ա	20x28, օֆսեթ 70, 4+4, 80 էջ	100	3000	300000
91	Հայերենի աղբյուր /արևմտահայերեն/Բ	20x28, օֆսեթ 70, 4+4, 80 էջ	100	3000	300000
92	Մեթոդական ձեռնարկ ավագ դպրոցի ուսուցչի համար	14,5x20, օֆսեթ 70, 1+4, 112 էջ	11	1500	16500
	ԸՆԴԱՄԵՆԸ				**43444998**
Կատարման սկիզբ՝2018թ 2-րդ եռամսյակ՝ մայիս			Կատարման ավարտ՝2018թ 2-րդ եռամսյակ՝ մինչև հունիսի 30-ը		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան Վ. Սարգսյան 3
ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011000107
ՀՎՀՀ 02705838

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Զանգակ-97» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտաս 49/2
«Էյչ-Էս Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217001-0040013-001
ՀՎՀՀ00830786

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«20» ապրիլի 2018թ. կնքված
ՀՀՄՆ-ՄԱ-18/13-ԱՇՁԲ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի																
ՀՀ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	79821170/1	Տպագրական և առաքման ծառայություններ	Առաջին եռամսյակ			Երկրորդ եռամսյակ			Երրորդ եռամսյակ			Չորրորդ եռամսյակ				
			-			-			21722499			43444998			43444998	

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան Վ. Սարգսյան 3
ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 900011000107
ՀՎՀՀ 02705838

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Զանգակ-97» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտաս 49/2
«Էյչ-Էս Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217001-0040013-001
ՀՎՀՀ00830786

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« » ապրիլի 2018թ. կնքված
ՀՀՄՆ-ՄԱ-18/13-ԱՇՁԲ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » ապրիլի 2018թ. կնքված
ՀՀՄՆ-ՄԱ-18/13-ԱՇՁԲ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն